**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

05-ը հունիսի 2018թ.
ժամը $15^{00}$

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀՇ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԿ ծառայության պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Մ. Հոխեյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Մ. Հոխեյան )

1. 1-ին տեղերը զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. 1-ին տեղերը զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

(Մ. Հոխեյան )

1.1 ***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն 1-ին տեղերը զբաղեցրած մասնակիցներից՝ «ՊՐՈՎԱՅԴԵՐ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ «ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ: Ընթացակարգի հրավերի համաձայն Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով չի գնահատվել:***

Հանձնաժողովի որոշմամբ 23.04.2018թ.՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 40-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ չափաբաժիններում 1-ին տեղերը զբաղեցնող ճանաչվեց «Նարնիկ» ՍՊԸ-ն, իսկ 26-րդ, 27-րդ, 28-րդ, 32-րդ, 33-րդ, 39-րդ, 41-րդ և 42-րդ չափաբաժիններում 1-ին տեղերը զբաղեցնող ճանաչվեց «Պրովայդեր» ՍՊԸ-ն, այնուհետև 25.04.2018թ. քարտուղարը հարցում է ներկայացրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե: 05.05.2018թ. ստացվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից տրված հարցման մասին տեղեկատվությունը համաձայն որի «ՊՐՈՎԱՅԴԵՐ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ «ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /06.04.2018թ./ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով /որոշ չափաբաժինների մասով/ ունի իր ներկայացրած գնային առաջարկների մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, որի չափը կազմում է 244 /երկու հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ և «ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտարարությունը /որոշ չափաբաժինների մասով/ որակվեց իրականությանը չհամապատասխանող, ուստի հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ «ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ-ի հայտը որոշ չափաբաժինների մասով /2-րդ,

5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 12-րդ, 13-րդ, 16-րդ, 30-րդ/ մերժվեց և հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը՝ որոշեց վերջինիս տվյալները ուղարկել լիազորված մարմին, եթե «ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ-ն կամ կոմիտեն երեք աշխատանքային օրվա ընթացքում չներկայացնեն լրացուցիչ տվյալներ մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման հիստին հաջորդող 3-րդ աշխատանքային օրը:

1.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին 1-ին տեղերը զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներքոհիշյալ դեպքի.

- «ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 6-ը, որին կցված էր N ԳՀԱՊՁԲ-10/20-2 պայմանագրի հավելված 1՝ չէր համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով ընթացակարգ հրավերի 6-րդ հավելվածին, որին պետք է կցվի «ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ-ի կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքներիի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:Հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովի քարտուղարը արձանագրված անհամապատասխանության մասին www.armeps.am կայքի ոչ ավտոմատ ծանուցումով տեղեկացրեց «ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ նիստը շարունակել մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում: «ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկեց անհամապատասխանությունը:

1.3 Քանի որ «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով «ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ-ի հայտը մերժվեց /Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմքով/, ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղը զբաղեցնող մասնակից է ճանչվել «ՊՐՈՎԱՅԴԵՐ» ՍՊԸ-ն և քանի որ 12-րդ չափաբաժնի /Լոգարանի ցնցուղի գլխիկներ/ մասով «ՊՐՈՎԱՅԴԵՐ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գինը գերազանցում է պատվիրատուի՝ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի պահանջները, որոշեց /հանձնաժողովի քարտուղարը 17.05.2018թ. «ՊՐՈՎԱՅԴԵՐ» ՍՊԸ-ին ծանուցեց բանակցության վերաբերյալ www.armeps.am կայքի ոչ ավտոմատ ծանուցումով /գնի նվազեցման նպատակով 23.05.2018թ. ժամը 10:30-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՔՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ և նիստը շարունակել այդ օրը, սակայն «ՊՐՈՎԱՅԴԵՐ» ՍՊԸ-ն չներկայացավ բանակցության: Հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնման ընթացակարգը 12-րդ չափաբաժնի /Լոգարանի ցնցուղի գլխիկներ/ մասով՝ հայտարարել չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

25.05.2018թ. կայացած նիստում հանձնաժողովն քննարկելով սույն արձանագրության 1.2 կետով նախատեսված մասնակցի կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերը՝ հանձնաժողովը որոշեց դրանք գնահատել հրավերի պահանջներին համապատասխան:

Քանի որ «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով */Պտուտակ և դյուբել /տարբեր//* 1-ին տեղը զբաղեցնող մասնակցի՝ «ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ-ի հայտը մերժվեց՝ */Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիքով/* հանձնաժողովը որոշեց 13-րդ չափաբաժնի մասով */Պտուտակ և դյուբել /տարբեր//* 1-ին տեղը զբաղեցնող մասնակից ճանաչել «ՊՐՈՎԱՅԴԵՐ» ՍՊԸ-ին և վերջինիս *25.05.2018թ.-ին* առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և նիստը շարունակել նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

05.06.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ «ՊՐՈՎԱՅԴԵՐ» ՍՊԸ-ի կողմից 13-րդ չափաբաժնի մասով /Պտուտակ և դյուբել /տարբեր// ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

1.4 ***05.06.2018թ.*** հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ-ի և «Պրովայդեր» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները և ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակիցներ՝ «ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ-ին «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 15-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 29-րդ, 31-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 40-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, իսկ «Պրովայդեր» ՍՊԸ-ին «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով ընթացակարգի՝ 13-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 32-րդ, 33-րդ, 39-րդ, 41-րդ և 42-րդ չափաբաժինների մասով և անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին) և 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել) որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնման ընթացակարգը՝ 2-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ և 30-րդ չափաբաժինների մասով՝ հայտարարել չկայացած:

1.5 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Հոխեյան )

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 12$^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Ս. Արովյան |
| Գնահատող | Ա. Պապյան |
| Գնահատող | Հ. Բաղալյան |
| Գնահատող | Ա. Մաղաքյան |
| Գնումները համակարգող՝ | Մ. Հոխեյան |

05.06.2018թ